

ՆԱԽԱԳԻԾ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Արսէն վարդապետ Ղլաճեանի. 1906 թ.

Տպարան ՇԻՐԱԿ Ալէքսանդրապօլ.

Սոյն նախագիծը տպագրուած է Վեհափառ Հայրապետի հրամանով և պէտք է նկատել մի գեղեցիկ փորձ է որոշ չափով մատնանշելու մեր եկեղեցական վարչական կազմակերպութեան այն պակասութիւնների վրայ, որոնք առաջ են եկել եկեղեցական հայրերի անափառութիւնից, միապետական ձգտումներից և տգիտութիւնից — Աւետարանի ոգին չըմբռնելուց, որովհետեւ եկեղեցականի համար դրանից մեծ և դատապարտելի տգիտութիւն մենք չենք ընդունում: Ծրագրի թերի կողմերի վրայ մենք քննադատօրէն կանգ չենք առնիլ, որովհետեւ ինքը՝ հ. հեղինակը հէնց իւր իսկ յառաջաբանի մէջ, որը դժուար թէ Վեհափառ Հայրապետի հրամանով տպագրուած լինի, ասում է հետեւեալը. —

«Մենք չենք յանդգնի ասել, թէ ներկայ աշխատութիւնը հեռի է պակասութիւններից: Կան թերութիւններ, որ ինքներս նկատել ենք. կան տեղեր, ուր մենք լրիւ չենք արտայայտել մեր ամբողջ միտքը, սակայն դրանց մի մասը եղել է որոշ դիտաւորութեամբ: Այդպիսի կէտերը, որոնց մասին մեր անձնական համոզումը կանոնի չենք վերածել, կարող էին և պէտք է մտնեն նախագծի մէջ այն ժամանակ, երբ հարցերի քննութիւնից դուրս գայ, որ դժբաժամանակի պահանջներ են»:

Ի նկատի ունենալով Արսէն վարդապետի յիշեալ տողերը, մենք բնականաբար մեզ վրայ չենք վերցնում ծրագրի քննադատութեան գործը այլ միայն ողջունելով հազուագիւտ անհատական փորձերը, կուզենայինք, որ յիշեալ ծրագիրն էլ ս. Սինօգի նախագծի հետ միասին յանձնուեր գործակալական շրջանների, փոխանորդութեանց մէջ գումարուելիք և թեմական ժողովներին քըն-

նութեան համար և լսուէր հառարակութեան աւելի լայն խաւերի կարծիքն ու պահանջը, որը նախապատ-
րաստական նիւթ կը կազմէր այն ընդհանուր եկեղեցա-
կան ժողովի, որն անհրաժեշտաբար պէտք է հրաւի-
րուի կարգաւորելու և լուծելու ժամանակի ընթացքում
կատարուած բազմաթիւ խնդիրները և եկեղեցին կրկին
վերածելու աւետարանական համայնքի և ոչ թէ ոստիկա-
նաբար կազմակերպուած բիւրօկրատիական իշխանութիւն
յիշեցնի իւր ղեկավարների եսական հաշիւներով և միայն
հրամաններ որոտալու ծարաւով. քաղաքական ներկայ
հանգամանքների շնորհիւ բնականաբար շատ դժուար է
մասնակցութեան կոչել այդ ընդհանուր եկեղ. — ժողովին
նաև տաճկահայոց, բայց այդ ժողովը գումարելով երկու
կամ երեք տեղ, (Կիլիկիա, Պօլիս և Էջմիածին) կարելի է
ունենալ այդ մասնակի ժողովների կարծիքն ու ձայների
թիւը իւրաքանչիւր խնդրի վերաբերութեամբ, որին և
միացնելով ս. Էջմիածնում գումարուած ժողովականների
կարծիքն ու ձայնը, կարելի է սրուել, թէ որ կէտերի
կողմն է ձայնից բազմութիւնը՝ հետևապէս և ազգը և
ահա այդ կէտերն ընդունել և գործադրութեան մէջ
մտնել, մինչև հետևեալ եկեղեցական համագումարը, որը
մեր կարծիքով պէտք է կայանայ իւրաքանչիւր Հայրապե-
տական ընտրութեան ժամանակ և ղեկավարի եկեղեցական
ժամանակակից խնդիրների լուծումով:

Ս. Տ. Վ. Մ.

